ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/118

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Սոցիալական ապահովության ծառայություն
Մասնակից՝ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցում, բեռների փոխադրման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.07.2019թ. թիվ 26/26-1/11985-2019 գրությամբ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սոցիալական ապահովության ծառայության 11.07.2019թ. թիվ 02/14-5/15171-2019 գրության հիման վրա, 17.07.2019թ.-ին «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 18.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 26.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 26.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.08.2019թ.-ին:

2. <u>Սոցիալական ապահովության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Սոցիալական ապահովության ծառայությունը 11.07.2019թ. թիվ 02/14-5/15171-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«2019 թվականի հունիսի 18-ին Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/15 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար բեռնափոխադրման ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երկու կազմակերպություն՝ այդ թվում «Ռոման Համբարձումյան Լևոնի» ԱՁ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացրած դիմումը-հայտարարության մեջ (հավելված 1):

Գնահատող հանձնաժողովի 2019թ. հունիսի 28-ի նիստի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է և հրավերով սահմանված կարգով ժամանակ է տրվել անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն Ընկերությունը նոր շտկված փաստաթղթի տարբերակը չի ներկայացրել հանձնաժողովին: Գնահատող հանձնաժողովի

2019թ. հուլիսի 2-ի նիստի որոշմամբ մերժվել է «Ռոման Համբարձումյան Լևոնի» ԱՁ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2019թ. թիվ 26/26-1/11985-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար բեռների փոխադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ն:

«Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ի հայտով ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմումը-հայտարարության մեջ (հավելված 1) պատվիրատուի անվանումը սխալ է լրացվել: «Սոցիալական ապահովության ծառայություն» անվանման փոխարեն լրացվել է «ՀՀ ՍՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն» անվանումը:

Նույն արձանագրության հիման վրա, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 03.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ սահմանված ժամկետում դիմում-հայտարարությունը (հավելված 1) չշտկելու հիմքով՝ հայտը հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմնավորմամբ՝ հայտով ներկայացված դիմում-հայտարարության մեջ պատվիրատուի անվանումը ճիշտ չի լրացված:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2019թ. թիվ 26/26-1/11985-2019 գրությամբ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի.

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում

բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու մասին հրահանգի 2.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի:

Նույն հրավերի 7.18-րդ կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սույն հրավերի 1-ին մասի 7.17 կետով սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Ընդ որում անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.18-րդ կետերով սահմանված պայմանները:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Սոցիալական ապահովության ծառայության կողմից իր կարիքների համար բեռների փոխադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ի ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմումը-հայտարարության մեջ (հավելված 1) պատվիրատուի անվանումը սխալ է լրացված եղել՝ «Սոցիալական ապահովության ծառայություն» անվանման փոխարեն լրացվել է «ՀՀ ՍՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն» անվանումը:

Նույն արձանագրության հիման վրա, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի 03.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ սահմանված ժամկետում դիմում-հայտարարությունը (հավելված 1) չշտկելու հիմքով՝ հայտը հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմնավորմամբ՝ հայտով ներկայացված դիմում-հայտարարության մեջ պատվիրատուի անվանումը ճիշտ չի լրացված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով արձանագրված անհամապատասխանությունների շտկումը, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.07.2019թ. թիվ 26/26-1/11985-2019 գրությամբ «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ռոման Համբարձումյան Լևոնի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**